5312

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 115 - 25

Նախաձեռնող՝ «ՍՐԱՊՅԱՆՆԵՐ» ՍՊԸ
Շիրակի մարզ ք Գյումրի Մ. Ավետիսյան փ. շ. 13, բն. 18

Գործունեությունը՝ Հովունիի տուֆերի երևակման «Սրապյաններ» տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ
Շիրակի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 115 - 25

«07» մայիսի **2025թ.**

Շիրակի մարզի տուֆերի «Սրապյաններ» հանքերևակման տարածքում 2025-2027թթ. նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Սրապյաններ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Ախուրյան համայնքի, Հովունի բնակավայր

Ներածական մաս. «Սրապյաններ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված նախագծային փաթեթով նախատեսվում է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովունի բնակավայրի վարչական տարածքում իրականացնել Շիրակի մարզի տուֆերի «Սրապյաններ» հանքերևակման տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. «Սրապյաններ» տուֆերի հանքերևակումը վարչական տեսակետից գտնվում է Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովունի բնակավայրի վարչական տարածքում և զբաղեցնում է 2.53 հա մակերեսով տարածք:

Հանքերևակումը հողածածկ է և գրունտային ավտոճանապարհներով կապված է Հովունի (0.5 կմ), Մահիսյան (3.5 կմ), Վահրամաբերդ (3 կմ), Գյումրի (7.5 կմ) քաղաքի և Հայկական երկաթգծի Գյումրի կայարանի հետ:

«Սրապյաններ» հանքերևակման տարածքը տեղակայված է Շիրակի գոգավորության հյուսիս-արևմտյան հատվածում, 1800-1820 մ բարձրության նիշերում:

Համաձայն կադաստրի կոմիտեի տրամադրած տեղեկատվության՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը գործող կադաստրային քարտեզում արտացոլելիս ներառվում է գյուղատնտեսական նշանակության հողամասերի սահմաններում: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասը

ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքը զուրկ է բուսածածկույթից:

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատները WGS-84 (ARMREF 02) համակարգով հետևյալ են՝

	X	Y
1.	4527658.99	8399095.13
2.	4527765.00	8398862.72
3.	4527872.48	8398922.08
4.	4527752.57	8399116.32

Հայցվող տարածքի ռելիեֆը հարթ է, գոգավոր, անտառազուրկ: Տարածքի ձախ լանջի երկայնքով 100-140 մ լայնությամբ տարածվում են քարքարոտ, գյուղատնտեսական նպատակների համար ոչ պիտանի հողեր: Հանքերևակման տարածքում տուֆերի ծածկոցի մերկացված ուղղաձիգ հզորությունը մոտ 3.0 մ է: Այստեղ տուֆերի տակ առանձնացվում են բազալտների 3 հոսքեր, որոնք միմյանցից տարանջատված են խարամացված բազալտների, գորշ կարմրավուն խարամների միջհոսքային առաջացումներով: Վերջիններիս առկայությունը պայմանավորված է հրաբխային գործնեության ընդմիջումներով (փուլայնությամբ): Տուֆերը ունեն մերձհորիզոնական տեղադրում՝ հարավ-արևելյան աննշան անկմամբ (3-5°) և ձևաբանորեն ներկայացված են շերտանման կուտակի տեսքով:

Հաշվի առնելով տեղանքի հարթ ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները, երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Հանքերևակման պարզ երկրաբանական կառուցվածքը հաշվի առնելով, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, տեղանքի ռելիեֆը, հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել միջինում 5 մ խորությամբ 5 հորատանցքերով, որոնց միջոցով կուսումնասիրվի և կնմուշարկվի տուֆերի հաստվածքը: Ընտրված հետախուզացանցը հետախուզական փորվածքների միջև 95-125 մ հեռավորությամբ, թույլ կտա հետախուզական փորվածքները միացնող եզրագծում պաշարները գնահատել A և B կարգերով, իսկ հացվող տեղամասի այն հատվածների համար որոնք հնարավոր է դուրս մնան նշված եզրագծից՝ B կարգով (հրահանգով նախատեսված թույլատրելի արտարկման գոտում):

Հայցվող տեղամասի շրջանի երկրաբանական կտրվածքը ներքևից-վերև ներկայացված է գնահատման հաշվետվությունում: Կոնդիցիոն բլոկների ելքի որոշման նպատակով նախատեսվում է անցնել փորձնական բացահանք, որտեղ ստացված փաստացի արդյունքների հիման վրա կգնահատվի 9479-2011 ԳՕՍՏ-ի պահանջներին բավարարող բլոկների ելքը, ինչպես նաև կորոշվի ապարների ճեղքավորության մակերեսային գործակիցը: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով նախատեսվում է նմուշարկել բոլոր փորվածքները՝ հորատանցքերը և փարձնական բացահանքը:

Յուրաքանչյուր հետախուզագծի վրա հորատանցքերի միջոցով օգտակար հաստվածքը կուսումնասիրվի ամբողջ հզորությամբ: Նախատեսվում է տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ, ինչպես նաև փորձնական բացահանքի անցում, նմուշարկում, ֆիզիկամեխանիկական լաբորատոր փորձարկումներ և ուսումնասիրություններ:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 132 մմ և 112 մմ տրամագծերով ինքնագնաց հորատող հաստոցով:
Հետախուզվող հանքերևակումում օգտակար հանածոյի պաշարների եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 5 հորատանցք միջինում 5 մ խորությամբ, ընդհանուր 25 մ ծավալով, որը ենթակա է փոփոխման կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը՝ 90%:
Հորատվող ապարները համապատասխանում են հետևյալ կարգերին.
1. դեյուվիալ, պրոլյուվիալ նստվածքներ և ուժեղ ճեղքավորված ու հողմնահարված տուֆեր IV կարգ: Այս ապարների միջին հզորությունը 0.5 մ:
2.թարմ, միաձույլ, թույլ ծակոտկեն տուֆեր VIII կարգ:
Հորատման աշխատանքները ըստ ապարների ամրության բաշխվում են հետևյալ կերպ. IV կարգի ապարներում՝ 2.5 մ, VIII կարգի ապարներում՝ 22.5 մ:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական հանույթի բացահանքը:
Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում 25 գծ. մ
- փորձնական բացահանքի փաստագրում 10 գծ. մ
- փաստագրման ընդհանուր ծավալը 35 գծ. մ

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ 100 մ^3 ընդհանուր ծավալով, որից 80 մ^3 թարմ չհողմնահարված տուֆեր: Փորձնական բացահանքի միջին պարամետրերը հետևյալն են՝ երկարություն 10 մ, առաջխաղացում 4 մ և խորությունը 2.5 մ:
Հանույթը կիրականացվի պայմանագրային հիմունքներով՝ KAMATSU PC-200 էքսկավատորի միջոցով, որի տեխնիկական պարամետրերը թույլ են տալիս աշխատանքներն ավարտել 1 աշխատանքային հերթափոխի ընթացքում:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից ու բացահանքից:
Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 5 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 4 մենաքար բացահանքից, ինչպես նաև 1 նմուշ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների համար, 2 նմուշ քիմիական կազմը որոշելու համար և երկու նմուշ ճառագայթահիգենիկ հատկությունները ուսումնասիրության համար:
Թարմ տուֆերի ֆիզիկամեխանիկական հատկությունների հետազոտությունների հավաստիությունը գնահատելու նպատակով փորձնական բացահանքից կնտրվի ևս 2 մենակտորային նմուշ:

Դաշտային պայմաններում օգտակար հանածոն ծածկող առաջացումների ծավալային զանգվածը որոշելու համար բոլոր հորատանցքերի համապատասխան միջակայքերի հորատահանուկից կկազմվի 1 խմբային նմուշ:

Հորատման, հորատհանուկի նմուշարկման և փաստագրման աշխատանքների ավարտից հետո հողաբուսական շերտը հետ է փռվելու հորատման հարթակի վրա, հարթեցվելու է, փխրեցվելու է: Հետախուզահորերի և փորձնական բացահանքի անցման ժամանակ հողի վերին շերտը 0.2 - 0.3 մ հզորությամբ կարճաժամկետ կտրվածքով կուտակվելու է փորվածքի անմիջական հարևանությամբ, իսկ նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո կատարվում է ռեկուլտիվացիա, ինչպես նաև հորատման հաստոցի տեղակայման վայրերի հողերի փխրեցում: Ռեկուլտիվացիոն

ՀՀ ԲՆՕՍՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓՈՍՏ ՀԱՍՑԵ 02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
RA YEREVAN "ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT CENTER" SNCO

աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիոն աշխատանքները, որոնք իրականացվելու են հորատահարթակների և փորձնական բացահանքի մակերեսներում, կատարվելու են անմիջապես ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո:
Հորատման հարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ նախատեսվում է հանել մակաբացման ապարներով հողային շերտը /որը հանդիսանում է 0.2-0.3 մ (միջինը՝ 0.25 մ) հզորությամբ ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներ/, կուտակել այն անմիջապես փորվածքի և հարթակի հարևանությամբ, աշխատանքների ավարտից հետո այն օգտագործել խախտված հատվածի վերականգնման նպատակով:
Հետախուզական աշխատանքների ավարտից հետո, հորատման հարթակների կառուցման ժամանակ հանված, հարթակների հարևանությամբ կուտակված մակաբացման ապարներով հողային շերտն ամբողջ ծավալով օգտագործվելու է ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակ: Ռեկուլտիվացիայի ենթակա մակաբացման ապարներով հողային շերտի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և հողային շերտը վերականգնվում է 0.25 մ խորության վրա: Հարթեցումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ: Հարթեցումը կկատարվի նախատեսվող փորձնական բացահանքի մակերեսով: Հայցվող տարածքում բացակայում են սողանքային երևույթները:
Հայցվող տարածքում մթնոլորտային օդի վրա վնասակար արտանետումների աղբյուրներն՝ են հորատումը, փորձնական բացահանքի անցումը և ճանապարհներով աշխատանքները: Ըստ հարակից տարածքներում շահագործվող հանքավայրերի տվյալների՝ ստորերկրյա ջրերի հորիզոններ տարածքում չկան: Խմելու կենցաղային կարիքների համար ջուրը կբերվի Հովունի բնակավայրից պայմանագրային հիմունքներով:
Երկրաբանահետախուզական աշխատանքների համար անհրաժեշտ տեխնիկական ջուրը նախատեսվում է վերցնել պայմանագրային հիմունքներով, կամ գնել ջրամատակարար կազմակերպությունից:
Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձանագրվել: Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրը աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի տեղաշարժն է, փորձնական արդյունահանման ժամանակ գործարկվող ծանր տեխնիկան և հորատման հաստոցի աշխատանքը: Ըստ գործող նորմատիվ պահանջների աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ: Գիշերային ժամերին երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ տեղամասի սահմաններում չեն կատարվելու: Տեղամասի տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում առաջացող ընդերքօգտագործման թափոններն լինելու են փորձնական բացահանքից հեռացվող փուշտա շերտի ջարդոտված, փշրված բազալտի կտորները, որոնք օգտագործվելու են ռեկուլտիվացիայիլեռնատեխնիկական փուլի ժամանակ:
Տեղամասում և հարակից տարածքներում անտառային հողեր, և անտառածածկ տարածքներ չկան:
Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 100000 ՀՀ դրամ:
Պատճառաբանական մաս. օրենսդրությանը համապատասխան՝ հանրային ծանուցումը և լսումները կատարվել են Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հովունի բնակավայրում: Հովունի բնակավայրի ղեկավարի նստավայրում, անցկացված հանրային լսումներում

գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, պաշտպանության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Շիրակի մարզպետարանից, Ախուրյան համայնքից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Պաշտպանության նախարարությունը երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին դեմ չէ՝ պայմանով, որ հետագայում արդյունահանման աշխատանքների իրականացման ժամանակ բացառվի դեպի հրամանատարական դիտակետ տանող ճանապարհի փլուզման ռիսկերը: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել գնահատման հաշվետվության լրամշակումներում: Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են լեռնային նախապատրաստական աշխատանքների և արդյունահանման հետ՝ համաձայն գնահատման հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1.Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

2.Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

3.Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

4.Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված բնապահպանական պահանջների կատարումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Սրապյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի տուֆերի «Սրապյաններ» հանքերևակման տարածքում 2025-2027թթ. նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովակիմ Ֆրունզիկյան